ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/40 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ	«30» հոկտեմբերի 2024թ.
	ժամը 12:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Մ.Մովսիսյան /նախագահ/,
Ա. Բոշյան, Ն.Մուրադյան,

Քարտուղար՝ Ս.Թամամավեյան

<u>ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/40 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի մասին</u>

Մ.Մովսիսյան

1) «Գնումների համակարգող /քարտուղար/ Սեդա Թամամավեյանը հայտարարեց, որ E-Auction էլեկտրոնային համակարգով գնային առաջարկ է ներկայացրել 2 /երկու/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	«ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ	Ք. Գավառ, Արծրունի Եղբայրների փողոց 166 Arm.textile@mail.ru
2	«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ	ք.Երևան, Նալբանդյան փող 25/14 76բն. Creative.business1920@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտը ըստ չափաբաժինների՝

- «ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1-4 չափաբաժինների մասով,
- «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1-4 չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Auction էլեկտրոնային համակարգի կողմից նախահաշվային գնից բարձր գին ներկայացնելու պատճառով ավտոմատ մերժվել է «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-4 չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/40 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

4.1) «ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- հայտով ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրում «ֆիրմային անվանումը», «ապրանքնային նշանը», «մակնիշը», «արտադրողի անվանումը» սյունակները լրացված չեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5) Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետը և 2024 թվականի հոկտեմբերի 18-ին ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/40 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերի փաթեթի Ի-ին մասի 8.11 կետի պահանջները, **գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

- **կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով՝** «ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 01/11/2024 թվականի ժամը 18:00-ն, շտկել վերը նշված անհամապատասխանությունը և Auction էլեկտրոնային համակարգի միջոցով ինչպես նաև էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի հրավերի պահանջներին չհամապատասխանող (անբավարար) և կմերժվի՝ դիտելով որպես գնման գործընթացի խախտում՝ ներառելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

6) Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի նոյեմբերի 4-ին, ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Մ.ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ԲՈՇՅԱՆ
		Ն.ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ